

«Գրանցված է»  
ՀՀ արդարադատության  
նախարարության կողմից  
7 սեպտեմբերի 2010 թ.  
Պետական գրանցման թիվ 10210332

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

7 սեպտեմբերի 2010 թ.

N 178-Ն

## Հ Ր Ա Մ Ա Ն

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՏԱՐՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՎԱՎԵՐԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ՃԶՄԻՉ ԿՆԻՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նոտարական փաստաթղթերը կեղծիքներից պաշտպանելու նպատակով.

#### *Հրամայում եմ*

- Հաստատել Հայաստանի Հանրապետության նոտարների կողմից վավերացվող փաստաթղթերում ճզմիչ կնիքի օգտագործման կարգը՝ համաձայն հավելվածի:
- Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի 2003 թվականի նոյեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության նոտարների կողմից վավերացվող փաստաթղթերում պաշտպանիչ ինքնաստանձվող պիտակների օգտագործման կարգը հաստատելու մասին» թիվ 390-Ն հրամանը:
- Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը և տարածվում է 2010 թվականի սեպտեմբերի 7-ից հետո ընկած հարաբերությունների վրա:

Նախարար

Գ. Դանիելյան

Հավելված  
ՀՀ արդարադատության նախարարի  
2010 թվականի սեպտեմբերի 7-ի  
N 178-Ն հրամանի

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՏԱՐՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՎԱՎԵՐԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ՃԶՄԻՉ ԿՆԻՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Սույն կարգը կարգավորում է Հայաստանի Հանրապետության նոտարների կողմից վավերացվող փաստաթղթերում ճզմիչ կնիքի ստացման ու օգտագործման հարաբերությունները:
2. Ճզմիչ կնիքները օգտագործվում են նոտարների կողմից վավերացվող փաստաթղթերը կեղծիքներից պաշտպանելու նպատակով:
3. Ճզմիչ կնիքները նոտարներին տրամադրվում են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից: Ճզմիչ կնիքները հաշվառվում են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի նոտարիատի բաժնի կողմից՝ համապատասխան գրանցամատյանում, որտեղ նոտարը ստորագրում է դրա ստացման համար:
4. Եթե օգտագործման ընթացքում կամ այլ պատճառներով ճզմիչ կնիքը վնասվում է, ապա նոտարը վնասված կնիքը հանձնում է նախարարության աշխատակազմի նոտարիատի բաժնի՝ այն ոչնչացնելու և նորը ստանալու համար:
5. Ճզմիչ կնիքի կորստի կամ գողանալու կամ ոչնչանալու դեպքում նոտարը պարտավոր է այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն: Նոտարի հայտարարության հիման վրա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը անվավեր է ճանաչում նախկին ճզմիչ կնիքը և այդ մասին տալիս հրապարակային հաղորդագրություն կամ տեղեկատվություն:
6. Նոտարի դիմումի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը երկօրյա ժամկետում նրան տալիս է նոր ճզմիչ կնիք:
7. Նոտարին պաշտոնից ազատելու կամ նրա լիազորությունները դադարեցվելու դեպքում ճզմիչ կնիքը հանձնվում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, որը ոչնչացվում է սահմանված կարգով:
8. Ճզմիչ կնիքը դրվում է նոտարի կողմից վավերացվող կամ հաստատվող բոլոր փաստաթղթերի վրա՝ նրա զինանշանի պատկերով կլոր կնիքի հետ միննույն էջում: Նոտարի մոտ պահպանվող փաստաթղթերի վրա ճզմիչ կնիք չի դրվում:
9. Ճզմիչ կնիքների օգտագործման կարգի նկատմամբ հսկողությունը իրականացնում է նախարարության աշխատակազմի նոտարիատի բաժինը: